

րեանց դարձեալք, ի փոքրկանց մինչեւ ցմեծամեծս ի յայս էին հարեալք ի սոյն կանխեալք: 10 Վասն այսորիկ ամենայնի բարկացեալ Տէր Աստուած ի վերայ Նոցա՝ եթող ի ձեռանէ, արար զնոսա կոխան ի յարուցելոցն ի վերայ Նոցա թշնամեաց Նոցա: 11 Քանզի ի ժամանակաց ի թագաւորութենէն Տրդատայ, յորմէ հետէ զՏէրն ճանաչելոյ՝ արար խաղաղութիւն, եւ լռեցոյց շուրջ զթշնամիս Նոցա, զի ցածոյց Տէր զմարտ պատերազմացն ի սահմանաց Նոցա, եւ մինչեւ յայն ժամանակ ոչ ընդ ումեք բանք գոյին ամբոխի կամ խռովութեան, եւ ի մեծի խաղաղութեան էին բնակեալք: 12 Ապա ի ժամանակին յայնմիկ յարոյց զաւրացոյց զգրգռութիւնս սահմանակցաւք շուրջ յամենայն կողմանս զթշնամիս Նոցա. եւ ոչ մի ոք ի թագաւորացն Յայոց ոչ ոք գտանէր Նոցա բարեկամ, այլ ամենեքեան թշնամիք:

ԳԼՈՒԽ ԺԸ.

1 Յաղագս Յայր մարդպետին, որ տայր կոտորել զազգս Նախարարացն Յայոց:

2 Բայց յայնմ յանմիտ թագաւորութեանն ժամանակի ոչ միայն թշնամիք թշնամեաց, այլ՝ եւ բարեկամք բարեկամաց եւ ընկերք ընկերաց դաւաճանութիւնս մատնութիւնս սկսան յարուցանել ի մէջ հայաստան երկրին, եւ բեր ազգի ազգի թշնամութիւնս գործելին: 3 Վասն զի անկաւ ի Նոսա խռովութիւն ի տեառնէ, այս պղծութեան եւ ոգի մոլորութեան. զի Նախ միմեամբք քանդեալք աւերեցան վասն անաւրէնութեան իւրեանց: 4 Բայց քան զամենեսին աւելի այր մի անաւրէն եւ այսամուտ, որ աւելի ընդ ազգս Նախարարացն զրգռէր զթագաւորն Տիրան: 5 Այս ինքն որ ունէր զպատիւն մեծի մարդպետութեանն, այր ներքինի՝ չարասիրտ չարախորհուրդ չարագործ, որում Յայր կոչէին: 6 Չբազումս ի Նախարարացն ետ քսութեամբ առանց վնասու կոտորել, եւ խանգարեաց զմեծ տերութիւն թագաւորութեանն: 7 Մանաւանդ աւելի զերկու տոհման զաւագս տայր իւրով չարախաւսութեամբ հանել ընդ սուր, եւ անունդ առնել միահաղոյն զտոհման Ռըշտունեաց եւ զտոհման Արծրունեաց. բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու եւ յանցման, մինչ անգամ եւ զեզսն կոտորեցին ազգացն: 8 Յայնմ ժամանակի ի գայթակղի գտանէին ի դայեակս մանկունս փախստեայս, զՏաճատ որդի Մեհընդակայ Ըռըշտունւոյ. եւ միւս եւս Շաւասպ որդի Վաչէի Արծրունւոյ. տղայք ստնդիայք, զոր ածին առաջի թագաւորին: 9 Իբրեւ տեսանէր, տայր հրաման հանել փողոտել զմանկունսն. զի Նոքա եւեթ ճետք մնացեալ էին յազգացն: 10 Եւ անդ դիպեալ Արտաւազդ եւ Վասակ, արք ի Մամիկոնեան տոհմէն, որք էին զաւրավարք ամենայն զաւրացն Յայոց, որք յարուցեալք անկան ի վերայ մանկանցն տղայոց, մէն մի յանթի հարեալք՝ ի դուրս գնա-

1 Յոր. չիք այլ